Ա. ԵԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ

ՅԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հանրային «ՎԵՆԿՈՄՏՐԵՍՏ»-ի տպ. պատվեր № 1478

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ
II-261144 գր

385.1 (47.92)

I I ..CV 2017

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՅԵՐԿԱԹՈՒՂՈՒ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

ՀԱՄ Կ (Բ) Կ ԱՆԴՐՅԵՐԿՈՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Լսելով ընկ. ՄԻՐՈՆՈՎԻ հաղորդումը, Համ Կ (բ) Կ Անդրյերկոմն արձանագրում է անդրկովկասյան յերկաթուղիների բացահայտորեն անբավարար վիճակը, յերկաթուղային անտեսության հիմնական չափանիշների թերակատարումը։

Անդրյերկոմը մատնանշում է, որ յերկաթուղում ստեղծված դրությանը, մի դրություն, որը մասնավորապես արտահայտվեց վերջին ժամանակներս խոշոր պատահարների ավելացումով (Բագու, Գոբի և այլն), հիմնական պատճառն այն է, որ ուղակի խախտվել են կուսակցության ու կառավարության միանձնյա ղեկավարման վերաբերյալ դիրեկտիվները և վատ վիճակի մեջ է աշխատանքային կարգապահությունը, թե բանվորների ու ծառայողների մեջ և թե յերկաթուղու ղեկավար որգաններում ու շահագործման շրջաններում։

Համ Կ (բ) Կ Անդրյերկոմը ՎՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հավանություն տալ Անդրյերկաթուղիների ժողկոմ մի տեղակալ ընկ. ՄԻՐՈՆՈՎԻ յերկաթուղիների վիճակին վերաբերյալ հրամանին։

Առաջարկել յերկաթուղու կուսակցական, կոմյերիտական ու արհմիութենական կազմակերպություններին՝ լայն քննարկել այդ հրամանը կուսակցական ու կոմյերիտական

բջիջների ժողովներում, բանվորների ու կոմյերիտական բջիջների ժողովներում, բանվորների ու ինժիներա-տեխնիկական սեկցիայի ժողովներում և ավյալ արտադրական միավորին համապատասխան կոնկրետ ձեռնարկումներ կիրառել՝ բարելավելու աշխատանքի դրվածքը և ամրացնելու աշխատանքային կարգապահությունը։

Սեպտեմբերի յերեքին ամբողջ Անդրկովկասյան յերկաթուղում և Անդրյերկաթշինում կազմակերպել միասնական կուսակցական որ ընկ. ՄԻՐՈՆՈՎԻ հրամանը քննարկելու համար։

Պարտավորեցնել հանրապետությունների կենտկոմներին, կուսակցության քաղկոմներին և շրջկոմներին՝ կուս աշխատողներ տալ յերկաթուղային կազմակերպություններին ոգնելու։

2. Մատնանշել յերկաթուղու ու շրջանային ՏՊՈ-ների չափազանց անբավարար աշխատանքն ինքնուրույն մթերման ու՝ ամբողջ բանմատակարարման կազմակերպման առպարեզում։ Պարտավորեցնել Անդրյերկաթուղու ՏՊՈ-ին՝ միջոցներ ձեռք առնել անհապաղ իրականացնելու բանմատակարարման վերաբերյալ այն ձեռնարկումները, որոնք ուրվագծված են Համ Կ (բ) Կ Անդրյերկոմի որոշման և ընկ. ՄԻՐՈՆՈՎԻ հրամանի մեջ։ Առաջարկել Անդրյերկաթուղու ՏՊՈ-ին՝ առան որը մի անգամ զեկուցել Անդրյերկոմին, թե ինչ ընթացք ունի ինքնուրույն մթերման, բանջարաբուծության ու անասնաբուծության զարգացման պլանի կատարումը, ինչպես յերկաթուղու ՏՊՈ-ի սիստեմում, այնպես ել բանվորների ու ծառայողների անհատական տնտեսություններում։

Նախազգուշացնել յերկաթուղու ՏՊՈ-ի Ֆրակցիային, որ այդ ձեռնարկումների չկատարելը համարվելու է կուսակցության դիրեկտիվների վիժեցում։

3. Մատնանշելով, որ միանգամայն անբավարար են կատարվում Հաղորդակցության ճանապարհների ժողկոմատի դիրեկտիվները և Համ Կ (բ) Կ Անդրյերկոմի որոշումները՝ Անդրյերկաթուղում տնտեսությունը բարելավելու և դեռածախսերը վերացնելու մասին, նշելով մինչև ոգոստոսի 15-ն աշխատավարձի պարտքերը վերացնելու վերաբերյալ դիրեկտիվի չկատարումն, առաջարկել յերկաթուղու դիրեկտոր ընկ. ՊՈԶԴՆՅԵՎԻՆ՝ ապահովել վերոհիշյալ դիրեկտիվների լիակատար կիրառումը։

4. Սույն որոշումը և ընկ. ՄԻՐՈՆՈՎԻ հրամանը հրապարակել մամուլում։ Պարտավորեցնել յերկրային, հանրապետական ու շրջանային թերթերի խմբագրություններին՝ սիստեմատիկաբար լուսաբանել սույն դիրեկտիվների կատարման ընթացքը։

Հ. Կ. (Բ) Կ. ԼԵՆՔԱՂԿՈՄԻ ԲՅՈՒՐՈՅԻ ՈԳՈՍՏՈՍԻ 27-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ

ԱՆԴՐՅԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՆԴԸՐՅԵՐԿՈՄԻ ՎՈՐՈՇՄԱՆ ՅԵՎ ԸՆԿ. ՄԻՐՈՆՈՎԻ ՀՐԱՄԱՆԻ ՄՇԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Նշելով Անդրյերկաթուղինների աշխատանքի մասին Համ Կ (բ) Կ Անդրյերկոմի վերջին որոշման և ճան Հաղորդակցության Ժողկոմի տեղակալ ընկ. Միրոնովի հրամանի քաղաքական-տնտեսական բացառիկ նշանակությունը և նպատակ դնելով կուսակցական պրոֆեսիոնալ և տնտեսական կազմակերպությունների վողջ ուժերի մոբիլիզացիայի միջոցով ապահովել յերկաթուղային տրանսպորտի առաջ դրված անհետաձգելի խնդիրների կատարումը բարձրացնելու յերկաթուղային տրանսպորտի բոլոր ողակներում աշխատանքի վորակը, բարձրացնելու յերկաթուղային բանվորների մեջ աշխատանքի դիսցիպլինան, Լենքաղկոմը որոշում է.

1. Սեպտեմբերի 3-ի կուսմիտոնական որը Լենինա-

կան կայարանի և Լենինականի շրջանի մեջ մտնող բոլոր կայարանների բանվորական և կուլտակցական ժողովներում մշակել Համ Կ (բ) Կ-ի Անդրյերկոմի վորոշումը և ընկ. Միրոնովի հրամանը։

2. Հանձնարարել կազմբաժնին ապահովել բոլոր ժողովները պատրաստված զեկուցողներով, ծավալել անհրաժեշտ նախապատրաստական աշխատանք Անդրյերկոմի վորոշումը և ընկ. Միրոնովի հրամանը սեպտեմբերի 3-ի ժողովներում լավագույն կերպով մշակելու համար։

3. Բացի սվյալ հարցի վերաբերյալ հրավիրված բջիջների քարտուղարների խորհրդակցություններից, ոգոստոսի 31-ին լրացուցիչ կերպով հրավիրել զեկուցողների խորհրդակցություն, վորտեղ լսել ընկ. Գոգուլցի հրահանգչական զեկուցումը Անդրյերկոմի վորոշման և ընկ. Միրոնովի հրամանի կապակցությամբ 4-րդ շրջանում կիրառվելիք միջոցառումների մասին։

4. Հանձնարարել դեպոյի, կոմիտեին, յերթևեկության կոլյուրոյին և տրանսպորտի Ռացած բջիջներին առաջիկա կուսորվա նախապատրաստական աշխատանքին տալ այնպիսի ծավալ, վորպեսզի հնարավոր լինի աշնանաձմեռային փոխադրումներին նախապատրաստվելու համար տրված պայքարի ընթացքի հանրագումարի հիման վրա, լիովին ուրվագծել այն նոր միջոցառումները վորոնք բխում են ընկ. Միրոնովի հրամանից։

5. Առաջարկել կազմհրահանգչին առանձնացնել հինգ պատասխանատու ընկերների ուղնելու դեպոյի կոմիտեին, յերթևեկության կոլյուրոյին և տրանսպորտային այլ բջիջներին նախապատրաստվելու սեպտ. 3-ի կուսորվան։

6. Անհրաժեշտ համարել հրատարակել հայերեն լեզվով Անդրյերկոմի վորոշումը և ընկ. Միրոնովի հրամանը, միաժամանակ հանձնարարելով «Բանվոր»-ին, վոր նա սիստեմատիկորեն լուսաբանի յերկաթուղային կազմակերպությունների պայքարի ընթացքը ընկ. Միրոնովի հրամանի կատարման համար։

ՀՐԱՄԱՆ

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՆԱՊԵՐԴՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻ ՏԵՂԱԿԱԼԻ-ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՅԵՐԿԱԹՈՒՂՈՒՆ

Չնայած բոլոր հնարավորություններին, չնայած բավականաչափ զինավորման՝ Անդրկովկասյան յերկաթուղում որինակելի աշխատանք կատարելու համար (փոխադրություն, շարժական կազմ, վառելանյութի մատակարարման պայմանները, առանձնապես բարենպաստ կլիմայական պայմաններ՝ յերկաթուղու մեծագույն տարածության վրա աշխատելու համար), յերկաթուղու աշխատանքում գոյություն ունեն մի շարք լուրջ խափանումներ ու բացեր։ Անդրյերկաթուղու աշխատանքն անբավարար է ընթանում։ Առաջադրված չափանիշները չեն կատարվում։ Վերջին ժամանակներս տեղի չեն ունենում մեծ թվով խոշոր պատահարներ և խորտակումներ։

Անդրկովկասյան յերկաթուղու անբավարար աշխատանքի հիմնական ու գլխավոր պատճառն է կուսակցության ու կառավարության միանձնյա ղեկավարման վերաբերյալ դիրեկտիվների չկատարվելը և աշխատանքային կարգապահության չափազանց ցածր մակարդակը բանվորների ու ծառայողների մեջ, ինչպես և դիրեկցիայի հրամանատարական կազմում, շրջանների վարչության լավ արտադրական միավորների մեջ։ Այդ բոլորը հետևանք է այն հանգամանքի, վոր յերկաթուղու դիրեկցիան և շահագործման շրջանների վարչությունը բավարար չափով

հատակ, ոպերատիվ ղեկավարություն չեն ցուցաբերում և իրապես պայքար չեն մղում Համկ(բ)կ կենտկոմի վորոշումներն ու ընկ. ԱՆԴՐԵՅԵՎԻ յերկաթուղային տրանսպորտին վերաբերյալ հրամանը կատարելու համար։ Այդ բոլորը հանգեց յերկաթուղու ամբողջ ապարատի թափթփվածությանը և պատշաճ պատասխանատվության ըդդացմունքի բացակայությանը յերկաթուղու դործակալների մեջ։

Դրա հետ միասին, յերկաթուղու դիրեկցիան և շահագործման շրջանի վարչությունը հմտորեն չեն բաշխում կադրերը, չեն խրախուսում բանվորներին, ծառայողներին ու ինժեներա-տեխնիկական կազմին՝ իրապես որինակելի աշխատանք կազմակերպելու նպատակով։

Յերկաթուղին չի կատարել Ճանապարհների Հաղորդակցության Ժողկոմատի մի շարք կարևոր հրամանները։ Մինչդեռ առ մեկն ոգոստոսի Անդրյերկաթուղու պարկում յեղել է 2500 վագոն, չի կատարվել Հյուսիսային Կովկասի յերկաթուղուն վագոններ տալու կարգադրությունը, վորտեղ վագոնները չափազանց անհրաժեշտ են հացահատիկ և այլ ապրանք բեռնելու համար։ Անդրյերկաթուղում կան նաև ավելորդ ցիստերներ, վորոնք անոդուտ կանգնած են պարկում, մինչդեռ յերկաթուղում ցիստերների սուր կարիք է զդացվում։

Յերկաթուղին ստացել է մեծ թվով նոր ռելսեր՝ հները փոխելու համար, սակայն այդ աշխատանքը չափազանց դանդաղ է ընթանում։ Ազատված հին ռելսերը ժամանակին չեն ուղարկում Հաղորդակցության Ճանապարհների Ժողկոմատին ըստ պատկանելության, վորով դժվարանում է շինարարությունը մյուս յերկաթուղիներում։ Հաղորդակցության Ճանապարհների Ժողկոմատի կարգադրությունը՝ վագոնները նորոգելու և յերկաթուղային անտեսությունը բարելավելու մասին, Անդրյերկաթուղին չափազանց դանդաղ է կատարում։ Կուտակվել են զգալի քանակությամբ հիվանդ վագոններ։ Մի շարք դիստանցիաներում, մանավանդ Ազատաֆա-Նավթլուղ դծամասում, ուղին գտնվում է չափազանց վատ վիճակում։ Շպալները փոխելու ծրագիրը մեծ ուշացումով է կատարվում։ Յերկաթուղու շպալների մթերումը չափազանց վատ է կատարվում։ Շինարարությունը մեծ չափով հետ է մնում պլանից, չափազանց թանգացնելով արժեքը։

Յերկաթուղու աշխատողների նյութական-կենցաղային պայմանները բավականաչափ արագ չեն բարելավվում, մանավանդ 3-րդ ու 4-րդ շրջանի մի շարք կայարաններում, վորտեղ անբավարար են բնակարանային-սանիտարական պայմանները։ Յերկաթուղում անթույլատրելի ընդհատումներ են տեղի ունենում աշխատավարձի վճարման ասպարիզում։ Բանվատակարարման դրվածքը (սննդամթերք, ապրանք, ճաշարաններ) մեծ թերություններ ունի։ Մանավորապես կոոպերացիան միանգամայն անբավարար է կատարում ինքնամթերումը և բավարար չափով չի ծավալել անտանաբուծությունը, բանջարաբուծությունը և այլն։ Բանվորներին և ծառայողներին, մանավանդ դծի բանվորներին ու ծառայողներին, անհրաժեշտ ոժանդակություն ցույց չի տրվում յերկաթուղուն պատկանող հողաշերտում նրանց համար անտեսություն ստեղծելու ասպարիզում։

Յերկաթուղին զգալի գերածախսեր է արել։ Տնտեսավարքն իրապես չի կիրառվում։

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Անդրյերկաթուղու անբավարար աշխատանքի համար Անդրյերկաթուղու դիրեկտոր՝ ընկ. Գոզդեյեվին յեվ նրա տեղակալ ընկ. Պապուլիա Ռոջոնիկիձեյին հանդիմանություն անել։

2. Ավելորդ վագոնները մյուս յերկաթուղիներն ուղարկելու վերաբերյալ Հաղորդակցության Ճանապարհների Ժողկոմատի կարգավորիչ առաջադրանքը չկատարելու յեվ

շահագործումն անբավարար ղեկավարելու համար, աշխատանքից հանել դիրեկցիայի շահագործման բաժնի պետ՝ ընկ. Պապիտաշվիլուն:

3. Քարշը անբավարար ղեկավարելու համար աշխատանքից հանել քարշի պետ ընկ. Մալիկովին:

Քարշի պետ նշանակել ընկ. Վասիլիյ Բնդելկինին:

4. Ֆինանսական անտեսությունը և անտնտեսությունը չղեկավարելու համար, աշխատանքից հանել ֆինբաժնի պետ ընկ. Ռանիխովին:

Ֆինբաժնի պետ նշանակել ընկ. Նուրովին:

5. Անբավարար ղեկավարություն ցուցաբերելու յեվ ներկաթուղու դիրեկցիայի կարգադրություններն անթուլատրելի կերպով չկատարելու համար, աշխատանքից հանել 3-րդ շրջանի պետ ընկ. Կուրակինին:

6. Յերկաթուղու դիրեկցիայի կարգավորող կարգադրությունները չկատարելու համար հանդիմանություն տալ յերկրորդ շրջանի պետ ընկ. Կիկելիձեյին, յերրորդ շրջանի յերթեվեկության պետ ընկ. Կոչեցկովին և յերկրորդ շրջանի յերթեվեկության պետ ընկ. Կիկնաձեյին:

7. Հաղորդակցության Ճանապարհների Ժողկոմատի՝ հին ռելսերն ուղարկելու վերաբերյալ կարգադրությունը չկատարելու համար հանդիմանություն եմ անում դիրեկցիայի ուղու բաժնի պետ ընկ. Դիկարյովին:

Պարտավորեցնել՝ ընկ. Դիկարյովին, անձնական պատասխանատվությամբ, 15 որում ուղարկել հին ռելսերը՝ Հաղորդակցության Ճանապարհների Ժողկոմատի ցուցումներով:

8. Տրված առաջադրանքները լավ կատարելու յեվ հանձնարարված գործը ղեկավարելու համար, շնորհակալություն եմ հայտնում դիրեկցիայի պլանային բաժնի պետ ընկ. Կալանդիային, դիրեկցիայի յեկամուտների բաժնի պետ ընկ. Զափարիձեյին, չորրորդ շրջանի պետի տեղակալ ընկ. Խուժարյանին, յերրորդ շրջանի պետի տեղակալ

ընկ. Հյուսեյինովին (Բաղվի կայարանը վերակառուցելու համար), յերկրորդ շրջանի կապի բաժնի պետի տեղակալ ընկ. Բոկուչավային, Թիֆլիսի դեպոյի պետ Սկիսենկոյին, Սամտրեդի դեպոյի պետ Կաչախիձեյին, չորրորդ շրջանի շահագործման բաժնի պետ ընկ. Սամսոնին, դիսատանցիայի պետ ընկ. Զանբուրիային, Բագու—յերկրորդ կայարանի պետ ընկ. Տիմոֆեյեվին, Բաթում կայարանի պետ ընկ. Իլյա Կաչարավային, դիրեկցիայի պրյանային բաժնի պետի տեղակալ ընկ. Նուրովին, և առաջարկում եմ յերկաթուղու դիրեկտորին՝ վորպես խրախուսանք տալ նրանց փողային փարձատրություն՝ յուրաքանչյուրին մեկ ամսվա ռոճիկի չափով:

9. Յերկաթուղու բոլոր աշխատողների ուշադրությունը հրավիրել, վոր անհանդուրժելի յեն կարգապահության խախտումները, վորոնք դիտնդիսանում են յերկաթուղու վատ աշխատանքի և մեծ թվով պատահարների ու արտահաշվարքի բացակայությունից առաջացած դերածախսերի գլխավոր պատճառը:

Ուշադրություն եմ հրավիրում, վոր աշխկարգապահությունը խախտելու համար պատասխանատվություն են կրում վոչ միայն այդ խախտումներ կատարողները, այլև նրանց անմիջականորեն յենթարկվող անձինք, վոր աշխկարգապահության ապրացման համար անհապաղ միջոցներ կիրառելու ասպարիզում պատասխանատու յեն առաջին հերթին ադմինիստրացիան:

10. Առաջարկում եմ յերկաթուղու դիրեկտորին, շրջանների պետերին և արտադրական միավորների պետերին՝ անհապաղ վերակառուցել իրենց աշխատանքը, համարելով իրենց գլխավոր նպատակը՝ ապրացնել աշխկարգապահությունը, կանոնավոր հիմքերի վրա դնել անտնտեսվարքը, վերացնել դերածախսերը, բարելավել բանվորների ու ծառայողների նյութական-կենցաղային պայմանները, ճիշտ բաշխել և ընտրել կադրերը, ամենայն ժառա-

կանությամբ վերացնել առանձին անձնավորությունների նշանակման գործին ցուցաբերվող վոչ գործունակ մոտեցման փաստերին, վորոնք մինչև այժմ էլ գոյություն ունեն յերկաթուղում։

11. ա) Ամենից ավելի ծանր կլիմայական ու կենցաղային պայմաններ ունեցող յերկաթուղամասերում բանվորների ու ծառայողների կենցաղային պայմանների բարելավումն ապահովելու նպատակով, յերրորդ շրջանի 50 կայարանում, չորրորդ շրջանի 12 կայարանում և յերկրորդ գոտու 6 կայարանում սեպտեմբերից աշխատավարձն ավելացնել 15-ից մինչև 30 տոկոսով։ Առաջարկում եմ յերկաթուղու դիրեկցիային՝ ամենաուշը մինչև ոգոստոսի 30-ը հրապարակել այն կայարանների ու աշխատողների կատեգորիաների ցուցակը, վորոնց աշխատավարձն ավելացվելու յե։

բ) Առաջարկում եմ դիրեկցիային և յերկաթուղու ՏՊՈ-ին՝ անհապաղ միջոցներ ձեռք առնել բարելավելու այդ կայարանների բանմատակարարումը, սահմանելով նրանց մատակարարման նախապատվությունն ու առաջնահերթությունը։

գ) Անհապաղ սահմանել այդ կայարաններում այն կարգը, վորով ապահովելու յե յերեխաների ընդունելությունը դպրոցներում, բանվորների ու ծառայողների հանդուցյան տներն ուղարկվելը, բանվորների ու ծառայողներին արտահագուստ մատակարարելը, հավասարեցնելով նրանց առաջին կատեգորիայի բանվորներին և ապահովելով հիշյալ կայարաններում դրա կատարումն առաջին հերթին։

Հանձնարարել յերկաթուղու դիրեկցիային՝ անհապաղ միջոցներ ձեռք առնել բարելավելու հիշյալ կայարանների բնակարանային պայմանները և ամբողջովին վերացնելու բնակարանների պակասությունը 1932 թ. չորրորդ յեռամսյակում ու ամբողջ 1933 թվականի ընթացքում, ապահովելով բոլոր բանվորներին ու ծառայողներին բնակարանային բավարար պայմաններով և կատարելագործելով վերացնելով այդ ժամանակամիջոցում բանվորների ու ծառայողներին վագոններում տեղավորելու պրակտիկան։

Յերկաթուղու ՏՊՈ-ի հետ միասին վերոհիշյալ կայարաններում կազմակերպել—3-րդ շրջանում 3 ճաշարան, 4-րդ շրջանում՝ 4 ճաշարան, 2-րդ շրջանում մի ճաշարան՝ բանվորներին ու ծառայողներին հանրային սնունդ մատակարարելու համար։

դ) Վերոհիշյալ ճաշարաններում կառուցել անհրաժեշտ թվով բաղնիք, և կազմակերպել անհրաժեշտ թվով շրջիկ բաղնիք։

Անհապաղ վերացնել խմելու ջրի պակասությունն այն կայարաններում, վորոնք զուրկ են խմելու ջրից, սահմանելով ջրի մատակարարումն այդ կայարանների համար հատուկ ցուցակով։

յե) Վորպես կանոն, այդ կայարանների բանվորների ու ծառայողների դիմումներով, նրանց, յերեք տարի այդտեղ աշխատելուց հետո, անպայման փոխադրել Անդրյերկաթուղու, ինչպես և մյուս յերկաթուղիների և մանավանդ Հյուսիսային Կովկասի ու Միջին Ասիայի յերկաթուղիների կլիմայական լավագույն պայմաններ ունեցող մյուս շրջանները, աշխատանք տալով նրանց վոչ ցածր այն պաշտոնից, վորը տանում էին նրանք հիշյալ կայարաններում։

զ) Հանձնարարել յերկաթուղու դիրեկտորին և յերկաթուղու ՏՊՈ-ին՝ անհապաղ կազմակերպել բանվորներին ու ծառայողներին անասունների և բանջարանոցների համար սերմեր մատակարարելու գործը և ոգնել յերկաթուղուն պատկանող հողաշերտում անասնաբուծություն կազմակերպելու և հողը մշակելու առպարիզում։ Այդ մատակարարումը կազմակերպել յերկաթուղու ՏՊՈ-ի միջոցով վարկավորման հիման վրա։

Այդ գործը զարգացնելու համար վարկ կազմակերպելու նպատակով, թույլ տալ դիրեկցիային հատկացնել հարյուր հազար ռ. շրջանառության ընդհանուր միջոցներից։

ե) Առաջարկել յերկաթուղու դիրեկցիային՝ կազմակերպել ամառը յերեխաների փոխադրումը մանկական այն գաղութներն ու ճամբարները, որոնք գտնվում են կլիմայական նպաստավոր պայմաններ ունեցող շրջաններում։

ը) Նկատի ունենալով սպառկոոպի յերկաթուղային սեկցիայի միջոցով Անդրյերկաթուղու ՏՊՈ-ին Հաղորդակցության ճանապարհների Ժողկոմատի ցույց տված ֆինանսական ոգնությունը, առաջարկել յերկաթուղու ՏՊՈ-ին մինչև 1932 թ. վերջերն ընդարձակել և ուժեղացնել անասնաբուծությունը յերկաթուղու ՏՊՈ-ի սխեմայում, յերաապահովելով մինչև այդ ժամկետն անասունների յուրաքանչյուր տեսակի թիվը։

Միաժամանակ առաջարկել յերկաթուղու ՏՊՈ-ին՝ անհապաղ միջոցներ ձեռք առնել կազմակերպելու սեփական ձկնորսարաններ, բավականաչափ ընդարձակ ձկնորսությամբ։ Լրիվ ապահովել մրգեղենի և բանջարեղենի մթերումը բանվորների և ծառայողների ձմեռվա կարիքների համար։

12. Անհապաղ ուժեղացնել և լրիվ ապահովել Հաղորդակցության Ճանապարհների Ժողկոմատի կոլեգիայի ցուցումները և Ժողկոմի հրամանի կատարումը, որոնք պահանջում են վերացնել դիմադրությունը վագոնների գործում, ուժեղացնել վագոնների նորոգումը և բարելավել ուղու տնտեսությունը։

13. Մատնանշելով մարդատար կայարանների զգալի բարելավումն Անդրյերկաթուղում, մասնավորապես Բաղվում, Բաթումում և այլ վայրերում, հանձնարարել յերկաթուղու դիրեկցիային, արագացնել Թիֆլիսի, Գյանջա-

[illegible]ը, Յերևանի ու Լենինականի կայարանների վերակառուցման ու բարելավման ավարտումը։

14. Հանձնարարել յերկաթուղու դիրեկտոր ընկ. ԳՈՉԴՆԵՑԵՎԻՆ՝ ընկ. ԱՎԵՐԻՆԻ և համապատասխան յերկրային կազմակերպությունների հետ միասին, ամենաուշը մինչև սեպտեմբերի 15-ը մշակել և ներկայացնել Հաղորդակցության Ճանապարհների Ժողկոմատին՝ Սամտրեդիթիֆլիս գծամասի ելեկտրիֆիկացիան շարունակելու ճիշտ պլանը։ Սահմանել ելեկտրո-եներգիայի ճիշտ պահանջը և եներգիայով ապահովելու ժամկետները։ Շինարարության ժամկետները սահմանելիս յելնել յերկաթուղային եներգիայով ապահովելու ժամկետներից։

15. Մատնանշել Ալյաթ-Զուլֆա յերկաթուղու և Սեծովյան յերկաթուղու շինարարության չափազանց դանդաղ ու անբավարար ընթացքը։

Հանձնարարել Անդրյերկաթշինի պետ ընկ. ՍԱՖԱՇՎԻԼՈՒՆ՝ միջոցներ ձեռք առնել յերթևեկությունն սկսելու և ժամանակավորապես շահագործելու Ղաթար գծամասում ամենաուշը մինչև սեպտեմբերի 15-ը, մինչև Ոչիմչիրի տանող յերկաթուղում ամենաուշը մինչև հոկտեմբերի 1-ը, մինչև Տկվարչելի՝ ամենաուշը մինչև նոյեմբերի 15-ը։

Հանձնարարել Անդրյերկաթուղու դիրեկտորին՝ նկատի ունենալով հիշյալ ժամկետները, լրիվ ապահովել ռելսերի մատակարարումն Անդրյերկաթշինին, հիշյալ գծերում դնելու համար։

Այդ նպատակով Հաղորդակցության Ճանապարհների Ժողկոմատի ցուցումների համաձայն, հին ռելսերն այդտեղ ուղարկել առաջին հերթին։

Հանձնարարել Անդրյերկաթշինի պետ ընկ. ՍԱՖԱՇՎԻԼՈՒՆ՝ ամենաուշը մինչև սեպտեմբերի 15-ը ներկայացնել Հաղորդակցության Ճանապարհների Ժողկոմատին հիշյալ շինարարությունների 1932 թ. չորրորդ յեռամսյակի և 1933 թվականի առաջին յեռամսյակի աշխատանքի պլ-

ՀՀ Ազգային գրադարան
NL0866637

լանը, այնպիսի հաշվով, որ ամենաուշը մինչև 1933 թ. վականի առաջին յեռամսյակի վերջը մշտական շահագործման հանձնվի Սեվծովյան յերկաթգիծը, Տկվարչելու գծամասի հետ միասին, և ամենաուշը մինչև 1933 թ. յերրորդ յեռամսյակի սկիզբը Ալյաթ-Ջուլֆա գիծը։

Պարտավորեցնել Անդրյերկաթշինի պետ ընկ. ՍԱԲՍԱՇՎԻԼՈՒՆ և Անդրյերկաթուղու դիրեկտոր ընկ. ՊՈԶԴԵՅԵՎԻՆ՝ տասն օրում ստուգել, մշակել ու համաձայնեցնել իրար մեջ այդ գծի դեռ չհաստատված բոլոր նախագծերը (դեպոյի, շենքերի դիրքը և այլն)։

Պարտավորեցնել Անդրյերկաթուղու դիրեկտորին՝ անհապաղ հանձնաժողով նշանակել Սեվծովյան և Ալյաթ-Ջուլֆա գծերի նոր շինարարությունները զննելու համար և հանձնարարել այդ հանձնաժողովներին՝ ցուցումներ մշակել Անդրյերկաթշինի համար, ներկայացնելով Հաղորդակցության Ճանապարհների Ժողկոմատին՝ ամենաուշը մինչև հոկտեմբերի մեկն իր կարծիքներն այն բոլոր միջոցների մասին, որոնք անհրաժեշտ են Սեվծովյան գիծը վերոհիշյալ ժամկետին մշտական շահագործման հանձնելու համար։

Հաղորդակցության Ճանապարհների
Ժողկոմի տեղակալ՝ ՄԻՐՈՆՈՎ

22 օգոստոսի 1932 թ.

11
26114